



ԴՈՒՌՆ ՎԵՀԱՐԱՆԻ

«Սիրէ Տէր գորուն» Էջմիածնի

(Սաղմ. 22)

«Զի այս դունն Տեանն է»

(Սաղմ. ԾԺԷ 17):

Վերջերս Նոր Վեհարանը օժտվեց գեղեցիկ մեծաշուք դռնով: Այդ դուռը սրտաբուխ նվերն էր Մայր Աթոռի բարերար բեյութաբնակ տեր և տիկին Գեղամ և Արաքսյա Տանձիկյանների:

Պարոն Տանձիկյանը սեպտեմբերի սկզբին այցելեց Մայր Աթոռ և իր ձեռքով ամրացրեց Նոր Վեհարանի փառաշուք, գեղեցիկ այս դուռը:

Սույն դռան նախագիծը պատրաստել է Մայր Աթոռին ստընթեր նարտարապետական հանձնաժողովի ժրաջան անդամ, շնորհալի նարտարապետ պրն. Բաղդիկ Արզումանյանը:

Սեպտեմբերի 9-ին, ի պատիվ տեր և տկն. Տանձիկյանների, Վեհարանում տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն ու ուրախությունը հայտնեց Մայր Աթոռի բարերարներին՝ իրենց այս գեղեցիկ նվերի համար, և, ի նշան հայրապետական Իր բարձր գնահատանքի, Մայր Աթոռի բարերար Գեղամ Տանձիկյանի կուրծքը զարդարեց ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի աղամանդակուռ շքանշանով:

Դռան վրա արձանագրված է հետևյալ հիշատակությունը. «Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի կաթողիկոսի Ամենայն Հայոց շինեցին և նուիրեցին տեր և տիկին Գեղամ Տանձիկեանք Լիբանանէն—1978»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է պրն. Գեղամ Տանձիկյանին և նրան մաղթում քաջատողջություն և երկար կյանք:

* * *

Այս առթիվ Բեյութում լույս տեսնող «Նոր Այնթապ» թերթի խմբագիր և Վահան Թեքեյան վարժարանի տնօրեն Երվանդ Պապայանը մի հարցազրույց է ունեցել բարերարի հետ, հարցազրույց, որը տպագրում ենք ստորև.

— Ս. Էջմիածնի Վեհարանը այսպիսի գեղեցիկ դուռով մը օժտելու գաղափարը ի՞նչպես հղացար:

— Երկար տարիներու իմ ամենասիրելի երագու էր այցելել Հայաստան, նախահայրերուս մեզի ավանդ ձգած նվիրական մեր երկիրը: Ուրախ եմ, որ ունեցա այդ երջանկությունը: Բնականաբար պիտի ուզեի ստաջին հերթին տեսնել հայ հավատքի դարավոր, անասան ամրոց ս. Էջմիածինը: Ինձի

տրվեցավ նաև ա՛յդ երջանկությունը: Ծնրադրեցի և խորանին սուչև և սող-թեցի՝ առ ի գոհունակությունն:

Ս. Էջմիածնի Վեհաբանեն ներս մտած պահուս ուշադրությունն գրավեցին գեղակերտ, շքեղ կառույցը և տեսքը: Այս հանելի տպավորությունն շեշտվեցավ ավելի, երբ ներս մտա Վեհաբանեն և տեսա թե ասեմ բան դասավորված էր խիստ ճաշակավոր կերպով: Սակայն նկատեցի անմիջապես, թե արտաքին ու ներքին ներդաշնակ, ընդհանուր գեղեցկության հետ չէր մերդաշնակվեր Վեհաբանին փայտաշեն հին դուռը: Նույն վայրկյանին ունեցա մտածումը այդ դուռը փոխարինելու Վեհաբանին ընդհանուր գեղեցկության համապատասխան դուռով մը: Պետք էր ամբողջական ըլլային ընդհանուր պատկերը և տպավորությունը: Այդ ձևով պիտի ունենայի Հայաստանյայց և եկեղեցիի մեր դարավոր կեդրոնին օգտակար եղած ըլլալու գոհունակությունը: Ըստ կսիրեմ հայ եկեղեցին, կապված եմ անոր մանուկ հասակես, որովհետև ծառայած եմ անոր իբր դպիր Պոլիս և Պեյրուօ:

— Ի՞նչպես գործի ձեռնարկեցիք:

= Այս մտադրությունն հայտնեցի լուսահոգի Հայկազուն սրբազանին և խնդրեցի իրմե, որ Վեհափառին կարծիքը առնեք այս մասին: Մեծ եղավ ուրախությունն, երբ Հայկազուն սրբազան հայտնեց, թե Վեհափառը ընդունած էր առաջարկս: Այս հարցի շուրջ մեր տեսակցության ընթացքին Վեհափառը թելադրեց ինձի, որ պատրաստեի դուռին գծագրությունը: Նկատել տվի Վեհափառին, թե ավելի նպատակահարմար պիտի ըլլար գծագրության Հայաստանի մեջ, մասնագետներու կողմե պատրաստիլը: Վեհափառը հավանեցավ:

Պեյրուօ վերադարձես 2—3 ամիս ետք գծագրությունը հասավ, կարգ մը թելադրություն-առաջարկներով: Ուսումնասիրեցի գծագրությունը: Բնականաբար առանց հիմնական փոփոխություններու, կարգ մը գործնական և անհրաժեշտ այլ անցան փոփոխություններով պատրաստեցի բնական մեծությամբ ՔՈՒՓ մը, մոտավոր գույներով և ուղարկեցի Վեհափառին, որպեսզի առնվեր հավանությունը և Էջմիածնի ճարտարապետներուն: Չուշացավ Վեհափառին հավանությունը, և ես ձեռնարկեցի գործի տարի մը առաջ:

— Կրնա՞ք կարգ մը մանրամասնություններ տալ:

= Դուռին պատրաստությունը տևեց ավելի քան տարի մը: 1972-ի նոյեմբերին չափերը ստուգելու համար գացի Էջմիածին:

Ձեռագործ է գրեթե ամբողջ դուռը. իրարու ագուցված 5—600 խաչեր ընդելուզված են իրարու՝ ամբողջական, ներդաշնակություն մը կազմելով շրջանակներուն հետ:

Դուռին կմախքը, որպեսզի տոկուն ըլլա, երկաթե է. երկաթը երեսապատված է ալյումինիումով: Սակայն, երեսապատումն առաջ երկաթը ժանգեմ գեթ պահելու համար ներկած ենք քանի մը անգամ: Ասիկա ապահովություն մըն է հարյուրավոր տարիներու դեմ:

Կմախքին վրա ագուցված բոլոր մնացյալ մասերը լրիվ ալյումինիում են: Գործածված է երեք գույն. ոսկեգույն, պրոնզի և շամփանյի գույն: Հայրապետական խորհրդանիշը, դրան ճակատին վրա հաստատված ձեռքի գործ է ամբողջությամբ:

Մասնավոր խնամքով և ամենաարդիական տվյալներով պատրաստված են դրան ծխնիները, որոնց մեջ հաստատված գնդիկները դարերով չեն մաշիր և չեն չորնար:



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԵՂԱՄ ՏԱՆՁԻԿՑԱՆՆԵՐԸ ԵՎ
ԺԱՐՏԱՐԱՊԵՏ ԲԱԴԴԱՍՏՈՐ ԱՐՋՈՒՄՆԱՅԱՆԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՆՈՐ ԳՐԱՆ ԱՌԱՋ